




SOLID2.0

Ծխախոտի տաքացման համակարգ

Օգտագործողի ուղեցույց

1. Յուրաքանչյուր մասի անվանումն ու բաղադրիչը



Սթիքի տեղադրման փական

Կափարիչ

Կողային պատյան

Կոճակ (LED լուսային ցուցիչ)

Կոճակը սեղմելիս կամ հենց սարքը միացվում է հոսանքին լիցքավորման բնիկով, երևում է սարքի լիցքավորման կարգավիճակը՝ ինչպես ներկայացված է ստորև.



Երբ սարքը լիցքավորվում է, լուսային ցուցիչը վառվում է .

- LED ցուցիչը թարթում է, երբ սարքը լիցքավորվում է:
- LED ցուցիչը անջատվում է, երբ սարքն ամբողջությամբ լիցքավորված է:

* LED ցուցիչի բաղկացուցիչ մասերի բնույթից ելնելով LED լույսի պայծառությունն ու գույնը կարող են փոքր-ինչ տարբերվել:

Լիցքավորման բնիկ

- Լիցքավորեք սարքը առաջին օգտագործումից առաջ:
- Ամբողջությամբ լիցքավորումը պահանջում է մոտ 2 ժամ, ինչն ապահովում է մոտ 25 սթիքի օգտագործում (սթիքերի քանակը կարող է փոխվել՝ կախված օգտագործման պայմաններից):



⚠ օգտագործեք միայն lil SOLID™ 2.0-ի համար նախագծված USB լար և Անուցման սարք, որը գալիս է Ձեր սարքի հետ միասին:

⚠ Դուք կարող եք լիցքավորել սարքը ցանկացած ժամանակ՝ անկախ մարտկոցի կարգավիճակից:

2. Տուփի բաղադրիչներ

lil SOLID 2.0 Սարք



Անուցման սարք



USB լար



Երկկողմանի
մաքրիչ



Հավաքածու

Օգտագործողի ուղեցույց, Անվտանգության գրուշացումներ և ցուցումներ,
Երաշխիք



3. Անվտանգության զգուշացումներ և ցուցումներ

Կարդացեք սույն Օգտագործողի ուղեցույցի բոլոր ցուցումները նախքան օգտագործելը՝ սարքն ապահով և ճիշտ ձևով գործարկելու համար:

Սույն Օգտագործողի ուղեցույցում քննարկվող անվտանգության բոլոր զգուշացումներն ու ցուցումները չեն կարող ընդգրկել սարքի օգտագործման ժամանակ առաջացող բոլոր հնարավոր իրադրությունները: Հարկավոր է ուշադիր և զգույշ լինել ցանկացած էլեկտրական սարք շահագործելիս կամ պահպանելիս:

Պահեք անվտանգության այս զգուշացումներն ու ցուցումները

հետագայի համար, քանի որ նրանք պարունակում են կարևոր տեղեկատվություն:

▲ Այս ցուցումներին չհետևելը կարող է հանգեցնել վնասվածքների

Սարքի հոսանքով սնուցում և մարտկոց

- Մի օգտագործեք սարքը, երբ Կափարիչը հեռացված է:
- Խուսափեք սարքը ջրի մեջ գցելուց:
- Սույն արտադրանքը չի պարունակում օգտագործողի կողմից նորոգման ենթակա մասեր:
Մի փորձեք բացել, ձևափոխել, մասնատել կամ վերանորոգել մարտկոցը կամ սարքի որևէ տարր:
- Եթե սարքը գնելուց հետո վնասվել է, ձևափոխվել, մասնատվել, շփվել հեղուկի հետ կամ ընկղմվել նրա մեջ, մի ակտիվացրեք այն:
- Ձեռք մի տվեք սարքին, Սնուցման սարքին և USB լարին գերտաքանալու, ծովիս արձակելու, բոցավառվելու, կայծեր

արձակելու կամ այրվելու դեպքում:

- Մի օգտագործեք սարքը, եթե այն գերտաքացել է:
- Մի միացրեք սարքը էլեկտրական լարերի կամ այլ մետաղական հարմարանքների միջոցով: Դա կարող է վնաս պատճառել:
- Մի օգտագործեք սարքը այնտեղ, որտեղ առկա են դյուրավառ նյութեր, հեղուկներ կամ գազեր կամ թթվածնի բարձր հագեցվածության պայմաններում: Այդպես վարվելը կարող է առաջացնել պայթյունի վտանգ:
- Սարքը, հոսանքի սնուցման սարքը և USB լարը չպետք է ենթարկվեն որևէ հեղուկի, յուղերի, լուծիչների և այլնի ազդեցության: Մի դիպչեք սարքին կամ նրա մասերին, եթե այն թաց է կամ եղել է հեղուկների, յուղերի, լուծիչների և այլնի մեջ:
- Մի օգտագործեք հեղուկներ, յուղեր, լուծիչներ սարքը մաքրելիս:
- Զգուշացեք այլ նյութերի ներթափանցումից սթիքի տեղադրման հատված: Մի օգտագործեք սարքը, քանի դեռ օտար մասնիկները չեն հեռացվել:
- Սարքից արտահոսած որևէ հեղուկի՝ մաշկի հետ շփման դեպքում, լվացեք շփման հատվածը՝

ներառյալ ձեռքերը և մի դիպչեք աչքերին: Այն դեպքում, երբ տեղի է ունեցել որևէ հեղուկի շփում աչքերի հետ, անմիջապես լվացեք մաքուր, հոսող ջրով առնվազն 15 րոպե և դիմեք բժշկի:

- Մի օգտագործեք սարքը, եթե մարտկոցից արտահոսք կա:
- Օգտագործեք միայն lil SOLID 2.0-ի համար նախատեսված USB լար և Սնուցման սարք: Սնուցման սարքի հաստատված մոդելները տես Օգտագործողի ուղեցույցի Տեխնիկական տվյալներ բաժնում:
- Լիցքավորեք սարքը միայն ներսում, ինչպես ցույց է տալիս նշանը ⏻:

Օգտագործում և պահպանում

- Օգտագործեք Fiit™ տաքացվող ծխախոտի գլանակներ՝ նաժատեսված հատուկ lil SOLID սարքի համար: Սարքի աշխատանքը չի երաշխավորվում, եթե Դուք այն օգտագործեք այլ գլանակների հետ:
- Ոչ մի ձևով մի փոփոխեք Fiit սթիքերը կամ մի ավելացրեք որևէ նյութ սթիքերի մեջ: Դա կարող է

հանգեցնել վնասվածքի:

- Պահեք սարքը, USB լարը, սնուցման սարքը և սթիքերը երեխաների և կենդանիների համար անհասանելի վայրում: Զգուշացում . երեխաները կարող են կուլ տալ մասերը:
- Սարքը նախատեսված է միայն չափահասների համար: Երեխաներն ու դեռահասները որևէ դեպքում չպետք է օգտագործեն սարքը:
- Սարքի ու տաքացվող ծխախոտի գլանակների վաճառքը անչափահասներին արգելվում է:
- Մի հանեք Կափարիչը, երբ սարքը գործարկվում է կամ անմիջապես օգտագործումից հետո, քանի որ սարքը կարող է տաք լինել: Թողեք սարքը հովանա նախքան Կափարիչը հանելը:
- Նույնսիկ եթե տաքացվող ծխախոտի գլանակը հեռացվել է օգտագործման ժամանակ, տաքացման գործընթացը շարունակվում է: Այն կանգնեցնելու համար անջատեք հոսանքի սնուցումը՝ Կոճակը 2 վրկ սեղմելով:
- Հովանալուց հետո մաքրեք սարքը:
- Սարքից տաքացվող ծխախոտի գլանակը հեռացնելուց

-
- հետո մի դիպչեք գլանակի ծխախոտային զանգվածին, քանի որ այն տաք կլինի օգտագործումից հետո:
- Խնամքով կարգավորեք սարքը: Մի գցեք կամ ուժեղ ցնցման ենթարկեք սարքը:
 - Բարձր ջերմաստիճան (օրինակ՝ մեքենայի ներսում կամ ջերմության աղբյուրների մոտ, ինչպիսիք են ռադիատորները կամ բաց կրակը), բարձր խոնավություն կամ ցածր ջերմաստիճան ունեցող վայրերում Սարքը պահելը կարող է նվազեցնել մարտկոցի աշխատունակությունը:
 - Երկար ժամանակ Սարքը չօգտագործելու դեպքում, մարտկոցի լիցքը կսպառվի: Օգտագործելուց առաջ սարքը վերալիցքավորեք:
 - IIL SOLID սարքի համար հատուկ նախատեսված Fiit սթիքերը մեկանգամյա օգտագործման են: Մի տեղադրեք օգտագործված սթիք սարքի մեջ: Սարքի աշխատանքը չի երաշխավորվում, եթե օգտագործված սթիքեր են տեղադրվել:
 - Տաքացվող ծխախոտի գլանակը երբեք չի կարելի այրել լուցկիով, կրակայրիչով կամ կրակի այլ աղբյուրով:
 - Fiit տաքացվող ծխախոտի գլանակերի վրա

նորմալ օգտագործումից հետո կարող են բժեր կամ գունաթափում նկատվել:

- Սարքը մի մտցրեք ձեր բերանը:
- Մի գործարկեք սարքն այնտեղ, որտեղ էլեկտրական սարքերի օգտագործումն արգելված է:
- Սույն սարքը նախատեսված չէ ֆիզիկական, զգայական կամ մտավոր կարողությունների կամ գիտելիքների պակաս ունեցող անձանց համար, եթե նրանք չեն գտնվում վերահսկողության տակ կամ ծանոթ չեն սարքը օգտագործելու անվտանգության կանոններին և չեն գիտակցում հնարավոր վտանգները:
- Քրտինքի, ուլտրամանուշակագույն ճառագայթների և քիմիական նյութերի կրկնվող ազդեցությունը կարող է գունաթափել սարքի արտաքին մակերեսը:
- Մագնիսական դաշտին մոտ լինելը կարող է անսարքություն առաջացնել:

Ծխախոտ և նիկոտին

- Fiit տաքացվող ծխախոտի գլանակները պարունակում են նիկոտին, ինչը կախվածություն է առաջացնում: Նիկոտինը բնականորեն առկա է սթիքերում

օգտագործվող ծխախոտի մեջ:

- Ծխախոտի կուլ տված սթիքերը կարող են առաջացնել նիկոտինային թունավորման վտանգ: Եթե տաքացվող ծխախոտի գլանակերը կուլ եք տվել, անհապաղ դիմեք բժշկի:
- Ծխախոտի հետ կապված առողջական ռիսկերը նվազեցնելու լավագույն միջոցը ծխախոտի և նիկոտինի օգտագործումն ամբողջությամբ դադարեցնելն է:
- Սիգարետ ծխելը թողնելու կամ նիկոտին պարունակող այլ արտադրանքներին անցնելու դեպքում կարող է պահանջվել որոշակի դեղերի (օրինակ՝ թեոֆիլին, կլոզապին, ռոպինիդոլ) չափաբաժնի ճշգրտում:
- Նիկոտին պարունակող ծխախոտի գլանակների օգտագործումը կարող է հանգեցնել կողմնակի ազդեցությունների, ինչպիսիք են գլխացավը, սրտխառնոցը, կոկորդի գրգռվածությունը կամ ստոմատիտը: Եթե Ձեզ մոտ առկա են այս ախտանիշները, անմիջապես դադարեցրեք արտադրանքի օգտագործումը:
- Եթե հղի եք, կարծում եք, որ հղի եք կամ կրծքով եք կերակրում կամ ունեք սրտային հիվանդություն,

շաքարախտ, էպիլեպսիա, նոպաներ կամ այլ լուրջ պայմաններ, Դուք պետք է ընդհանրապես հրաժարվեք ծխախոտի և նիկոտինի օգտագործումից և խորհրդակցեք բժշկի հետ:

- Տաքացվող ծխախոտի գլանակների օգտագործումը կարող է առաջացնել ավերակի ռեակցիա:
- Անմիջապես դիմեք բժշկի, եթե զգում եք հետևյալ ախտանիշներից որևէ մեկը. դեմքի, շրթունքների, լեզվի և այլնի այտուց և/կամ շնչառության դժվարացում:

Անցանկալի երևույթների կամ պատահարների մասին զեկուցում


- Եթե սարքն օգտագործելիս առաջանում է առողջական որևէ խնդիր, դիմեք բժշկի:
- Անցանկալի դեպքերի կամ միջադեպի մասին կարող եք հայտնել՝ զանգահարելով Ձեր տարածաշրջանի Հաճախորդների սպասարկման կենտրոն՝ +374 44 007177:
- Հայտնելով անցանկալի դեպքերի, կողմնակի ազդեցությունների մասին՝ Դուք կօգնեք լրացուցիչ տեղեկություն հավաքել այս արտադրանքի անվտանգության մասին:

4. Օգտագործում


1 Նախքան օգտագործելը



Սարքը գտնվում է բնի ռեժիմում և չի գործարկվում մինչև Ձեր առաջին օգտագործումը: Սարքն աշխատեցնելու համար 2 վայրկյան սեղմեք Կոճակը կամ միացրեք լիցքավորիչը լիցքավորման բնիկին:



Մինչ սարքը արթնանում է, LED լուսային ցուցիչը երկու անգամ թարթում է հաջորդաբար կարմիր, նարնջագույն, երկնագույն և կապույտ գույներով:




Հենց սարքը ակտիվանում է, LED լուսային ցուցիչը միաժամանակ 1 վրկ թարթում է երկնագույն և կրկնակի վիբրացիայի ազդակ տալիս:

Մարտկոցի կյանքը պահպանելու համար սարքը կվերադառնա քնելու ռեժիմ՝

- 1 Եթե այն չի լիցքավորվում 24 ժամվա ընթացքում, երբ LED լուսային ցուցիչը կարմիր է:
- 2 Եթե այն չի օգտագործվում 7 օր, երբ LED լուսային ցուցիչը նարնջագույն է, երկնագույն կամ կապույտ:



Վերցրեք սարքը



Սահեցրեք և բացեք սարքի վերևում գտնվող Սթիքի տեղադրման փականը:




Տեղադրեք IIL SOLID-ի համար նախատեսված Fiit սթիքը սթիքի տեղադրման հատվածի մեջ՝ ծխախոտի մասով դեպի ներքև և սեղմեք սթիքը ներս, մինչև այն դիպչի սթիքի տեղադրման հատվածի հատակին:

- Եթե սթիքը տեղադրեք զվիվայր, օգտագործման ընթացքում սարքը կարող է փչանալ: Օգտագործելուց առաջ խնդրում ենք ստուգել սթիքի տեղադրման ուղղությունը:
- Փակեք Սթիքի մուտքի/ելքի փականը, երբ սարքը չի օգտագործվում՝ կանխելու համար որևէ նյութի ներթափանցումը:


2 Սարքի գործարկում



Սեղմեք Կոճակը 2 վրկ մինչև վիբրացիայի ազդակը:



2 վրկ անց LED լուսային ցուցիչը միաժամանակ թարթում է երկնագույն և տալիս վիբրացիա: Մոտ 25 վայրկյանի ընթացքում տաքացման նախապատրաստական փուլն է սկսում: Փուլի տևողությունը կարող է տարբերվել՝ օգտագործման միջավայրից ելնելով:




Երբ տաքացման նախապատրաստական փուլն ավարտվում է, LED լուսային ցուցիչը միանում է և միաժամանակ վիբրացիայի ազդակ է տալիս: Սա նշանակում է, որ սթիքը պատրաստ է օգտագործման:


3 Օգտագործում



Fiit տաքացվող ծխախոտի գլանակով սարքը պատրաստ է օգտագործման: Դուք ունեք մինչև 14 ներքաշի հնարավորություն կամ 5 րոպե, որը կգա առաջինը:



Սեանսի վերջին 30 վայրկյանները կամ վերջին 3 ներքաշերը, որը որ առաջինը կգա, ազդարարելու համար, սարքը մեկ անգամ կթրթա, և LED լուսային ցուցիչը կթարթի երկնագույնով մինչև սեանսի ավարտը:



Երբ սեանսը ավարտվում է, LED լուսային ցուցիչն ու սարքը ավտոմատ անջատվում են: Հարկավոր չէ սեղմել Կոճակը:

Սեղմեք Կոճակը 2 վայրկյան և հանեք տաքացվող ծխախոտի գլանակը միայն այն դեպքում, եթե ցանկանում եք դադարեցնել սեանսը և սարքի օգտագործումը:

4 Տաքացվող ծխախոտի գլանակի հեռացումը



Պտտեք սթիքը մեկ ուղղությամբ 3 կամ ավելի անգամ:



Սթիքը դուրս հանեք սարքից:



Փակեք Սթիքի տեղադրման փականը:

Եթե տաքացվող ծխախոտի գլանակը չի հեռացվում, ինչպես նկարագրված է վերևում, օգտագործված գլանակի մնացորդները կարող են ներսում մնալ:


Եթե տաքացվող ծխախոտի գլանակի տեղադրման հատվածում կան որոշ մնացորդներ, տես 6. Խնդիրներ բաժնի 1 կետը

5 Հաջորդական օգտագործում

Հաջորդական օգտագործման համար, խնդրում ենք կրկնել 1-4 քայլերը: Հնարավոր է մինչև 3 հաջորդական օգտագործման հնարավորություն:

5. Մաքրում և պահպանում


❶ Մաքրում Երկկողմանի մաքրիչով




Վերցրեք Երկկողմանի մաքրիչը:




Մաքրող գլխիկն օգտագործելու համար նրբորեն բացեք այն Ծ նշանի կողմով:




Մաքրող խոզանակն օգտագործելու համար նրբորեն բացեք այն Խ նշանի կողմով:



Հեռացրեք Կափարիչը սարքից:



Տեղադրեք Մաքրող գլխիկը սարքի մեջ և մաքրեք սարքը՝ պտտելով Մաքրող գլխիկը:




Տեղադրեք Մաքրող Խոզանակը սարքի մեջ և մաքրեք սարքը՝ պտտելով Մաքրող խոզանակը:

- * Սարքի օպտիմալ աշխատանքի համար խորհուրդ ենք տալիս մաքրել սարքը 20 րոպե օգտագործելուց հետո:
- * Մի մաքրեք սարքը տաքացման ընթացքում կամ սարքն օգտագործելուց անմիջապես հետո: Թողեք սարքը հովանա, հակառակ դեպքում Մաքրող գլխիկը կամ Մաքրող խոզանակը կարող են հալվել և կաշել սարքին:
- * Խուսափեք Մաքրող գլխիկի կամ Մաքրող խոզանակի՝ ցանկացած հեղուկի, յուղերի, լիժիչների և այլնի հետ շփումից:
- * Խուսափեք Մաքրող գլխիկի կամ Մաքրող խոզանակի՝ աչքերի հետ շփումից:
- * Մաքրող գլխիկը կամ Մաքրող խոզանակը հետո պահեք կրակից:
- * Մաքրող գլխիկը և Մաքրող խոզանակը օգտագործելու ժամանակ պետք է զգուշ լինել, քանի որ դրանք կարող են տուր լինել:
- * Մաքրող գլխիկից ու Մաքրող խոզանակից բացի մաքրող այլ հարմարանքների օգտագործումը կամ ավելորդ ուժ գործադրելը կարող են վնասել տաքացնող սարքը:


2 Մաքրում տաքացմամբ



Արագ սեղմեք Կոճակը 5 անգամ (2 վայրկյանի ընթացքում):



LED լուսային ցուցիչը կթարթի նարնջագույն, և մաքրման գործընթացն ավտոմատ կերպով կսկսվի:



Երբ մաքրման գործընթացն ավարտվում է, LED լուսային ցուցիչն ավտոմատ կերպով անջատվում է և 2 անգամ վիբրացիայի ազդակ տալիս:

* Մաքրում տաքացմամբ նշանակում է տաքացնող հատվածին կպած մնացորդների տաքացում: Տաքացնող հատվածը կարող է շատ տաքանալ, ուստի մաքրման ընթացքում կամ անմիջապես հետո բացառեք նրա հետ ցանկացած տեսակի շփումը:

6. Խնդիրներ

❶ Ես չեմ կարողանում սթիքը տեղադրել սարքի մեջ:

Եթե սթիքի տեղադրման հատվածում կան նախորդ սթիքից մնացորդներ, դա հնարավոր է խոչընդոտի սթիքի մուտքը:

Հանեք սարքի Կափարիչը՝ մնացորդները հեռացնելու համար և փորձեք նորից տեղադրել ծխախոտի տաքացվող զլանակը:



Ստուգեք Սթիքի մուտքի հատվածում մնացորդների առկայությունը:




Եթե օգտագործված սթիքերի մնացորդներ կան, հանեք Կափարիչը սարքից:




Հեռացրեք մնացորդները Կափարիչից:


❷ Իմ սարքը չի աշխատում:



Կարգավորիչի LED ցուցիչը լուսավորվում է կարմիր 3 վայրկյանում, և միաժամանակ վիբրացիայի 3 ազդակ է նկատվում: Մարտկոցը ոչ բավարար մակարդակի է: Լիցքավորեք սարքը:



Կարգավորիչի LED ցուցիչը թարթում է կարմիր 5 անգամ: Սարքը անսարք է: Վերագործարկեք սարքը:




Կարգավորիչի LED ցուցիչը 3 վայրկյան թարթում է նարնջագույն լույսով: 3 անընդմեջ սեանսներից հետո սարքն ավտոմատ կերպով կհովանա: Խնդրում ենք սպասել մինչև սարքի ջերմաստիճանը կայունանա:

* Ձեր անվտանգության համար սարքը չի կարող օգտագործվել ավելի քան 3 անգամ 18 րոպեի ընթացքում, քանի որ այն պետք է հովանա: Պահանջվում է 3 րոպե 30 վայրկյան հաջորդ սեանսին անցնելու համար:


3 Ինչպես կարող եմ վերագործարկել սարքը:



Սեղմեք Կոճակը 8 վայրկյան, նույնիսկ եթե վիբրացիան սկսում է 2 վայրկյանից:



Սարքը վերագործարկվում է, և Կարգավորիչի LED ցուցիչը հաջորդաբար երկու անգամ թարթում է կարմիր, նարնջագույն, սառույցի կապույտ և կապույտ գույներով:



Երբ սարքը ամբողջությամբ վերագործարկվում է, Կարգավորիչի LED ցուցիչը 1 վայրկյան լույս է տալիս երկնագույնով, և վիբրացիան տեղի է ունենում միաժամանակ երկու անգամ:

4 Տաքացվող ծխախոտի գլանակի օգտագործումը չափազանց կարճ է:

Սարքը նախագծված է մինչև 14 ներքաշի կամ 5 րոպե օգտագործման համար, որը տեղի կունենա առաջինը:
Սարքի երաշխիքային ժամկետը մեկ տարի է՝ պահպանելով երաշխիքի մեջ նկարագրված պայմանները:

7. Թափոնում

- Սարքն օգտագործում է լիթիումի իոնային մարտկոց: Թափոնեք Ձեր սարքը՝ համաձայն գործող կանոնակարգերի:
- Խնդրում ենք կապվել տեղական քաղաքային իշխանությունների հետ՝ սարքի և էլեկտրահաղորդչի հեռացման մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

8. Երաշխիք

Երաշխիքային ժամանակաշրջան

- Սույն որակի երաշխիքը և պիտանիության ժամկետը գնման օրվանից 12 ամիս է և գործում է lil SOLID սարքի, Սնուցման սարքի և USB լարի համար:
- Գնման ապացույցի բացակայության դեպքում ընկերությունն իրեն իրավունք է վերապահում կամավոր կիրառել երաշխիքի տևողությունը՝ սկսած տվյալ ապրանքի արտադրության օրվանից՝ հիմնվելով սեփական գրառումների վրա:

Երաշխիքային ծածկույթ

- Կազմակերպությունն իր հայեցողությամբ (բայց առանց օրենքով սահմանված Ձեր իրավունքները սահմանափակելու) կվերանորոգի կամ կփոխարինի նյութի կամ պատրաստման տեսանկյունից ցանկացած անսարք տարր, եթե այն շահագործվել է lil SOLID 2.0 Օգտագործողի ուղեցույցի պահանջներին համապատասխան և հանդիսանում են սույն երաշխիքի առարկա:
- Եթե հնարավոր չէ վերանորոգել, ապա սարքը կփոխարինվի մեկ ուրիշով՝ համարժեք գործառնությամբ: Որքանով թույլ են տալիս տեղական օրենքները, փոխարինման գույնը և/կամ մոդելը ենթակա են այդ նույն գույնի և/կամ մոդելի առկայության դեպքում: Սույն երաշխիքի ներքո արտադրանքի փոխարինման դեպքում ցանկացած փոխարինված մաս դառնում է Ձեր սեփականությունը, իսկ փոխարինվող մասը դառնում է այն կազմակերպության սեփականությունը, ով կատարել է այդ փոխարինումը:
- Սույն երաշխիքի դրույթները գործում են միայն սարք վաճառող երկրի տարածքում:

Երաշխիքից բացառումներ

Ժամկետանց երաշխիքով կամ սպառողի անփութության պատճառով վնասված ապրանքները ենթակա չեն երաշխիքային սպասարկման:

Սույն երաշխիքը չի տարածվում հետևյալի վրա՝

- (ա) բնական մաշվածության հետևանքով առաջացած վնաս;
- (բ) կոսմետիկ վնասներ (ինչպիսիք են՝ խազերը, փոսիկները, կոտրված պլաստիկը և այլն); որը, սակայն չի ազդում ապրանքի աշխատանքի վրա;
- (գ) ոչ ճիշտ շահագործելու, չարաշահման, դժբախտ պատահարների, ոչ բարվոր օգտագործման միջավայրի, բնական աղետների, հոսանքի տատանումների, հեղուկի կամ կրակի ազդեցության պատճառով առաջացած վնաս;
- (դ) անհամատեղելի գլանակներ, սնուցման սարք կամ լար օգտագործելու հետևանքով առաջացած անսարքություններ;

- (ե) վնաս կամ անսարքություն, որն առաջացել է արտադրողի կողմից չհավատարմագրված սպասարկող անձի կամ օգտագործողի կողմից սարքը բացելու, ձևափոխելու կամ վերանորոգելու փորձի պատճառով;
- (զ) վնաս կամ անսարքություն, որն առաջացել է IIL SOLID 2.0 Օգտագործողի ուղեցույցի դրույթները խախտելու պատճառով;
- (է) մարտկոցի նորմալ աշխատանքի մաշվածություն, եթե մարտկոցի աշխատանքի ձախողումը չի առաջացել նյութերի կամ մշակման դեֆեկտի պատճառով;
- (ը) ամբողջությամբ կամ մասնակի ոչ բնօրինակ մասերով սարքեր;
- (թ) սարքի կամ նրա մասերի կորուստ կամ գոլորություն;
- (ժ) սարքի գործարկում ի սկզբանե նախատեսված կամ հաստատված երկրներից դուրս:

Երաշխիքի հայտ

Սույն երաշխիքի շրջանակներում հայտ ներկայացնելու և օգնություն ստանալու համար, խնդրում ենք կապ հաստատել Հաճախորդների սպասարկման կենտրոնի վերը նշված հեռախոսահամարով կամ այցելել մեր խանութներից որևիցե մեկը: Երաշխիքի հայտը ներկայացնելիս վստահ եղեք, որ ունեք գնման ապացույց:

Այլ դրույթներ

Կազմակերպությունը ոչ մի դեպքում պատասխանատվություն չի կրում ոչ մի արտադրանքի օգտագործմանը վերաբերող անձնական կամ երրորդ կողմի ցանկացած հայտի համար՝ բացառությամբ սույն փաստաթղթում նշված արտադրանքի:

Կազմակերպության՝ Ջեր հանդեպ ունեցած օրենքով նախատեսված դեպքերից դուրս: Այս երաշխիքի շրջանակներում ծագած իրավունքները չեն սահմանափակում, այլ լրացնում են գնման երկրի՝ սպառողների պաշտպանության մասին օրենքներով նախատեսված բոլոր իրավունքները և պաշտպանության միջոցները:

9. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

lil SOLID 2.0

Մարտկոցի տեսակը՝ Լիթիում-իոնային վերալիցքավորվող մարտկոց
Մուտքային հզորություն՝ 5.0Վ==2.0Ա
Պատրաստված է Մալայզիայում
Արտադրող՝ ԷԼԵՆՏԵԿ Քո . ՍՊԸ
64-3 Դոնգտանգիհանգ-րո, Հուասանգ-սի, Գյանգգի-դո, Կորեայի Հանրապետություն

lil SOLID 2.0 մակնշված է $\text{D}\square\text{C}$ նշանով, որին հաջորդում է "xx-1007EMTx", ինչը ցույց է տալիս, որ lil SOLID 2.0 կարող է վերալիցքավորվել միայն lil SOLID 2.0-ի համար նախագծված սնուցման սարքերի մոդելների օգնությամբ:

Սնուցման սարք

Մոդել՝ HM-1007EMTE
Մուտքային հզորություն՝ 100Վ–240Վ~ 50–60Հց 0,35Ա
Ելքային հզորություն՝ 9.0Վ==1.67Ա կամ 5.0Վ==2.0Ա
Պատրաստված է Վիետնամում
Արտադրող՝ ՀԱԵՄ ՎԻՆԱ Քո . ՍՊԸ
Բ4 թաղամաս, Սոնգ Կհե - Նոի Հոանգ արդյունաբերական զոնա, Սոն Կհե համայնք, Բակ Գիանգ քաղաք, Բակ Գիանգ մարզ, Վիետնամ

USB լար

C տիպի հետ համատեղելի

Պատրաստված է Վիետնամում
Արտադրող՝ ԿՐԵՍԻՆ Հանոի Քո . ՍՊԸ
Դոնգ Թհո արդյունաբերական համալիր, Դոնգ Թհո համայնք, Յեն Պհոնգ շրջան, Բակ Նինհ մարզ, Վիետնամ

Երկկողմանի մաքրիչ

Պատրաստված է Մալայզիայում
Արտադրող՝ ԷԼԵՆՏԵԿ Քո . ՍՊԸ
64-3 Դոնգտանգիհանգ-րո, Հուասանգ-սի, Գյանգգի-դո, Կորեայի Հանրապետություն

Տեղեկություններ ծխախոտի տաքացման էլեկտրական համակարգի համապատասխանության պարտադիր հավաստման մասին

II SOLID 2.0 Սարք

Տեխնիկական կանոնակարգ «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011); Տեխնիկական կանոնակարգ «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ԵԱՏՄ ՏԿ 037/2016)

Սնուցման սարք

Տեխնիկական կանոնակարգ «Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն» (ՄՄ ՏԿ 020/2011); Տեխնիկական կանոնակարգ «Ցածրավոլտ սարքավորումների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 004/2011); Տեխնիկական կանոնակարգ «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ԵԱՏՄ ՏԿ 037/2016)

USB լար

Տեխնիկական կանոնակարգ «Էլեկտրատեխնիկայի և ռադիոէլեկտրոնիկայի արտադրատեսակներում վտանգավոր նյութերի կիրառումը սահմանափակելու մասին» (ԵԱՏՄ ՏԿ 037/2016)



II SOLID սարքի արտադրման տարին և ամիսը իմանալու համար անհրաժեշտ է զանգահարել Հաճախորդների սպասարկման կենտրոն և հայտնել սարքի կափարիչի տակ նշված 14 նիշանոց տառաթվային կոդը:

Սնուցման սարքի արտադրման տարեթվին համապատասխանում է սերիական համարի (SN:YVWDXXXXX) առաջին թիվը, որտեղ Y=տարի (1 = 2011; 2 = 2012 և այլն):

Պահպանման պայմաններ . չոր, օդափոխվող տարածքներ, ջերմային ռեժիմ՝ 5°C-30°C, հարաբերական խոնավություն՝ ոչ ավել, քան 70%:



lil SOLID ծխախոտի էլեկտրական տաքացման համակարգում ներառված ապրանքների ցանկը տես փաթեթավորման վրա:

lil SOLID ծխախոտի էլեկտրական տաքացման համակարգի ծառայության ժամկետը գնման օրվանից 12 ամիս է:

Ուղարկեք Ձեր բողոքներն ու առաջարկությունները ներմուծող կազմակերպության հասցեով:

Ներմուծող՝ «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ, ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան 2

Հաճախորդների սպասարկման կենտրոն՝

+374 44 007177

⚠ Զգուշացում

Սարքն օգտագործեք lil SOLID սարքի համար նախատեսված Fiit տաքացվող ծխախոտի գլանակների հետ:

Վաճառքն անչափահասներին արգելվում է: Fiit տաքացվող ծխախոտի գլանակները վաճառվում են առանձին:

lil, lil SOLID և Fiit ապրանքային նշանները պատկանում են KT&G կորպորացիային և օգտագործվում են արտոնագրի ներքո՝ Ֆիլիպ Մորրիս Փրոդաքթս Ս . Ա . -ի կողմից: IQOS-ը Ֆիլիպ Մորրիս Փրոդաքթս Ս . Ա . -ին պատկանող ապրանքային նշան է: